ԼՈՅՍ

ՀԱՆԳԷՍ ԱԶԳԱՅԻՆ

Կը հրատարակուի Չորեքշաբթի եւ Շաբաթ օրերը: Տարեկան գինն է մէկ լիրա օսմանեան: Մէկ թերթը 40 վարա արծաթ: Նամակ կամ ո՛եւ է գրութիւն պէտք է ուղղել Աո. Մ. Փափամահեան Կոստանդնուպոլիս, Մերձաւ Ջարդի Բիւշտի Էֆենտի խանի տակ Մ. Գ. Սարըեանի տպարանը:

ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ ԹԻՒ 109 — 1880 — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 5 ՆՈՅԵՄԲԵՐ

ՏԵՍՈՒԹԻՒՆ Մ Ը

Հայաստանի գաւառներէն հասած դըրութիւնք դարձեալ լի են ահուր եւ ազետալի տեղեկութիւններով:

Սովը մէկ կողմէ, աղքի աղքի հարըստահարութիւնք, անկարգութիւնք եւ արհաւիրք միւս կողմէ օր աւուր կը ծանրանան ու կ՛սպառնան Հայուն՝ գոգցես նորա վերջին հարուածը տալու, եւ մեք այգդին աչքերնիս չորս անկած՝ կ՛սպասենք որ քաղաքակրթեալ Եւրոպան համաչնորհնեմբ չինած եւ վաւերացուցած իր Պերլինի դաշնադրութեան 61րդ. յօդուածն համաչնորհնեմբ գործադրէ կամ գործադրել տայ:

Ասա հարկ կ՛գդամք հարցնելու թէ ի՞նչ չահեցանք Պերլինի վեհաժողովէն:

Ա՛յս հարցումը կ՛ընեմք, որովհետեւ մեր ամենուս ալ ուշադրութիւնն անոր վրայ դարձած եւ զարմանալի մտմամբ մը մեր բոլոր յոյսն ու ակնկալութիւնն՝ ի նոյն կեդրոնացած է:

Արդ, տեսնեմք ուրեմն թէ Պերլինի վեհաժողովը ի՞նչ կամ ո՛րպիսի չնորհ ըրած է մեզի:

Շնորհ կ՛ըսեմ, որովհետեւ մեզ չնորհ ենդրեցին:

Ահաւասիկ այն չնորհը. — «Բ. Դուռն յանձն կ՛առնու անյապաղ իրացնել այն բարեփոխումներն ու բարենորոգումները՝ զորս տեղական պէտքերը կը պահանջեն Հայոց բնակած գաւառներուն մէջ եւ երաշխաւորել նոցա ապահովութիւնը Քուրդերուն եւ Չերքեզներուն դէմ: Բ. Դուռն այս նպատակին համար ձեռք առնուած միջոցները պարբերաբար պիտի հաղորդէ Եըրոպիոյ, որք պիտի հսկեն նոցա վերայ»:

Մեք առանց քննելու այժմ նոյն յօդուածին մեզի համար ո՛րքան նպաստաւոր լինելը, կ՛անցնիմք յոյց տալու թէ այդ յօդուածն ի՛նչ զօրութիւն ունեցաւ, եւ ո՛րպիսի արդիւնք յառաջ բերաւ:

Երկու տարիէ, այն է, Պերլինի դաշնադրութեան մէջ 61րդ. յօդուածը նշանա-

կուելէն 'ի վեր՝ Հայաստանի դաւառաց մէջ տեղի ունեցած անցքերը նշանակելն աւելորդ կը համարիմք, որովհետեւ ամենքս ալ կը յիշեմք, ինչպէս կը յիշեմք Թուրդերէ և Ջերքէզներէ ղատ՝ յիշեալ դաւառաց մէջ դաղթականաց աւելնալը, զոր նախաստեաց չընդունուն յիշեալ հռչակաւոր դաշնադրութիւնն՝ այս մասին յիշատակութիւն մ'ընդած չէ։

Մենք Ազգ. Պատուիրակարանն հարկաւոր այժ առնելով այն հսկողութեան իրաւունքէն, զոր դաշնադրութիւնը կը տարամագրէ, Հայաստանի դաւառաց մէջ հետզհետէ տեղի ունեցած կամ մանաւանդ սաստկացած հարցուտահարութեանց նկատմամբ Բ. Դրան և միանգամայն հսկելու պարտականութիւն ընծանձնող պետութեանց ակաու տեղեկագրել, որուն այնքան հատատաութիւն կուտային հիւպատոսական դրութիւնք և Եւրոպական լրագրաց թղթակցութիւնք, որ կրցին հուսկ ապա առ Հայոց ազգն համակրութիւն ղարթուցանել աղատ երկիրներու մէջ, բայց չկրցին կասեցնել այն հետևանքներն, որոց կ'ենթարկէ դրդռեալ մոլեռանդութիւնն ըզՀայս այն դաւառաց մէջ, որոց պետոյից պահանջմանն համաձայն բարւոքմունք և բարենորոգմունք անյապաղ 'ի դործ պիտի դնէին։

Աւելորդ է ըսել նախ թէ դաշնադրին մէջ տեղական պետոյից պահանջած բարւոքմունք և բարենորոգմունք խօսքն անորոշ է, որուն վրայ արդէն մեծ յոյս չկրնար դրուիլ։

Ընդհանուր կերպով մեր հասկցածն այս է թէ՝ տէրութիւնք ձեռք առնուած միջոցներուն վրայ հսկողութիւն պիտի ընեն. իսկ այդ միջոցներն որոշելու իրաւունքը բացարձակապէս Բ. Դրան թողուած է։

Ահա է աւասիկ խնդրոյն իրաւաբանական վերլուծութիւնը։

Գալով հսկող տէրութեանց կողմէ դիտողութիւն ուղղելու և կամ ծանուցադիր ղրկելու խնդրոյն՝ պարզապէս մ'ըսդդային դաշնադրութեամբ Բ. Դրան պարտականութիւն ստանձնած ըլլալէն ծագած իրաւունք մ'է։

Միջազգային դաշնադրութենէ մը նպաստաւորուելու կոչուողք չեն կրնար այնքան մեծ յոյս դնել իրենց եղած բայառիկ չընորհին վրայ, քանի որ նոցա իրացմանն համար ստորագրող տէրութեանց հաւաքական կամքէն զատ՝ չկայ ուրիշ գերագոյն իշխանութիւն մը իրը վերին դատաւոր և կամ հակչիռ ղօրութիւն։

Իրը օրինակ կրնամք մէջ բերել 56 ի դաշնադրութիւնն, որոյ տրամադրութեամբ Բ. Դրան վրայ պարտականութիւն դրուած էր նաև հպատակ ազդաց պատրիարքարաններուն ծախքն ինք մատակարարելու։

Սոյն տրամադրութիւնը չնշուած չէ ուրիշ տրամադրութեամբ մը. սակայն Բ. Դուռը խնայողական պատճառաւ բոլոր հպատակ ազդաց հիւանդանոցներուն հայն ու միսն իսկ կտրելու հարկադրեցաւ, և կասկած կայ թէ կալուածական վկայագրերու հաստիքն ալ առնուի, որուն նկատմամբ արդէն խօսքեր կան։

Աւասիկ իրողութիւն մը, որ քիչ մ'առաջ մեր ըսածը կը հաստատէ, որմէ կրնամք դնահատել նաև 61 րդ. յօդուածին արդիւնքն ալ, 61 րդ. յօդուածի'ն, որոյ վրայ այնքան մեծ յոյսերով լցեալ Հայք՝ բաց 'ի հակառակութեան հետևանքէ՝ ուրիշ ո'ր և է բարիք չվայելեցինք տակաւին, և վայելելու համար ալ Բ. Դրան ձեռք առնելիք միջոցներէն զատ՝ ըստ յիշեալ յօդուածոյ տրամադրութեան՝ ուրիշ բանի չեմք կրնար դրական յոյս ունենալ։

Բ. Դուռը Բրդաց ապստամբութեան պատճառաւ ղօրք կը համախմբէ 'ի Հայաստան, ուր ըստ 61 րդ. յօդուածոյ՝ նոցա և Ջերքէզաց դէմ Հայոց ապահովութիւնն ե-

բաշխաւորել կը թուի, զոր՝ իբր միջոց իր ընտանձնած պարտականութեանն, հսկող տեսութեանց գուցէ հաղորդել ուզէ, իրացընելով նաև այն բարեբարուութիւնն ու բարենորոգումնքը, զորս տեղական պիտոյքը կը պահանջէն, և զորս Բ. Դուռն ստուգած է իր լիազօր պատուիրակայ քննութեամբը։

Եթէ չեմք սխալիր, այս է այն արդիւնքը, զոր կը բերէ մեզի Պերլինի դաշնադրութեան 61 րդ. յօդուածն իբր ընորհ կամ իրաւունք, զոր լիովին պիտի վայելեմք այսուհետև։

Աստ առանց գառնալու այն կէտին թէ ի՞նչ պէտք էր ընել, և մեք ի՞նչ ըրինք, կ'ըսեմք, և կը կրկնեմք դարձեալ թէ մեր բոլոր ակնկալութիւնն առանց այլ ևս կեդրոնացնելու երևակայական յոյսերու և պետական համակրութեան վրայ, մեք մեզի դառնամք և տեսնեմք մեր ստոյգ վիճակն, ուր կը գանուիմք, և մեր ներքին վերակազմութեանն ջանալով արժանի լինիմք դործնական համակրութեան, որուն համար իրական արժանիք պէտք կը լինի, իրական արժանիք, զոր ինքզինքնութեամբ միայն կըրնանք ստանալ։

Կը հետևի ուրեմն թէ օգնութիւնը մեք մենք պէտք է սպասեմք։

Ռամկական առածը կ'ըսէ «օտարի պետուկ նայողին ծուռ չլիկ պէտք է»։

«Հայք և Եւրոպա» յօդուածներով արդէն ըստ բաւականին բացատրեցինք թէ մեք Եւրոպիոյ վրայ ո՛րքան յոյս կրնանք դնել՝ մանաւանդ այսպիսի նիւթապաշտութեան դարու մը մէջ, ուր իրաւանց նշանաբանը շահն է միայն։

Չ'ըսեմք անհնար, սակայն ո՛րչափ դժուարին է շահու համար միայն խորհող Եւրոպայէն դործնական ճանքով իրական բարիք ակնկալել այնպիսի ժողովուրդի մը համար, որ նահատակիլ դիտէ։

Մեր այս դիտողութիւններէն ոմանք ժողովուրդին համար յուսահատութիւն հետևցնելով զդուշութեան խրատ կուտան մեզի. բայց մեք իրաւամբ կրնամք ըսել թէ շատ դէշ բան է ժողովուրդն յոյսերով քնացնել, որմէ պարզապէս բարոյական մեռելութիւն յառաջ կուդայ, որովհետև «որ յուսով մեղանչէ, անյոյս կորնչի»։

Մեք լաւադոյն և միանդամայն դործնական կը համարիմք ճշդիւ պարզել մեր վիճակն և ղգացնել, որպէսզի ժողովուրդը ձեռնամուխ լինի այնպիսի միջոցներու, որով ազգի մը ապագան ապրկբայ է։

Մեք, ինչպէս առաջ, նաև ասկէ ետքն ալ մեր անհրաժեշտ պէտքերուն վրայ պիտի խօսիմք, զորս դիտնալն ու հոդալը խիստ հարկաւոր է մեր ապագային համար։

Եթէ, ինչպէս պէտք է, այնպէս շարժիմք ու զմեզ պատրաստեմք, ապագան անշուշտ մերն է, որովհետև ժողովուրդ մը դործնական միջոցներով կրնայ հասնիլ և ոչ երբեք սին յոյսերով, որմէ ստէպ լքումն և յուսահատութիւն կը հետևի։

Ուստի այսուհետև մեր դործող և շարժուածող նչանաբան պէտք է լինի «դուն քեզի օգնէ, որ Աստուած ալ քեզի օգնէ» ի սկզբունքն, որ անվրիպելի է։

ՍՈՎ՝ Ի ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստանի դառաններէն հասած գրութիւնք, ինչպէս նաև Սովետոյ խնամող Կեդր. Պատ. Յանձնաժողովոյ շրջաբերականք պատիժ—սովուն օրըստ օրէ սաստկանալը կը ծանուցանեն, և մինչև իսկ սովամահ տեղի ունենալը կը յայտնեն։

Ասանք այնպիսի իրողութիւններ են, որ առ Հայրենիս մեր անհրաժեշտ պարտեսոյ վրութով՝ ի գործ դնելու հարկը կ'ազդարնեն։

Այս մասին ներքև մեզ քիչ մ'աւելի լրջորէն խորհիլ։

Ուստի նախ տեսնեմք թէ սովը ի՞նչ է.—

— Բնութեան մէջ այնպիսի նիւթեր կան, ո-րոյ սպառումէն և կամ նուազելէն տեղ տեղ սպառելով կամ նուազելով նաև հողին արտադրիչ զօրութիւնը՝ կրնայ ամենայն բանի համար՝ ցորեն երկիրը կ'արտադրէ, սակ և կամ արտադրութեան նուազումը պատահիլ, որ բնութեան մի աննահանջելի օրէնքն է:

Հետևաբար ինչ որ բնութեան մէջ կայ, տարօրինակ չէ, և կրնայ ամեն տեղ իր ազդեցութիւնն ի գործ դնել:

Ընթերցողը լսած են և դիտեն հարկաւ թէ սակ կոչուած բանն ամենէն քաղաքակրթեալ երկիրներու մէջ անգամ, ղրօրինակ ի Գաղղիա, Անգղիա, Ամերիկա, Գերմանիա և ուրիշ ազնատան տեղեր պատահած է և կը պատահի, ինչպէս որ այժմ Ռուսիոյ մի քանի գաւառաց մէջ ալ սկսած է:

Դիտուած է թէ ինչ որ երկիրը մի քանի տարի յաջորդաբար առատութեամբ կ'արտադրէ, յետոյ սակ կամ նուազում կը պատահի թէ արմտեայ և թէ պտղոյ, բանջարեղինոյ, հանքայ, հանքաջրոյ և առ հասարակ ամեն բանի համար, զոր՝ ինչպէս ըսինք, երկիրը կ'արտադրէ:

Այս բանը սակն բնական պատճառն է:

Կայ երկրորդ պատճառ մ'ալ, որ յառաջ կուգայ պատերազմի պատճառաւ մշակութեան դադրելէն:

Հայաստանի մէջ պատահած սակը կրնայ այս երկու պատճառներէն միանգամայն յառաջ եկած լինիլ, կրնայ կ'ըսեմք, որովհետև բնական պատճառին եթէ մնացէն վերահասու չեմք, գոնէ երկրորդ պատճառը քաջ կը յիշեմք, որովհետև դեռ երեք տարուան խնդիր է, և մեր պատմութիւնը մոռնալ ոչ ոյոյ կուտայ թէ երբ պատերազմի և կամ անապահովութեան պատճառաւ մշակութիւնը դադրեր է, անպատճառ սակ և հետևաբար մահ յառաջ եկեր է:

Փորձառութեան վրայ յենլով՝ կրնամք ըսել նաև թէ Հայաստանի մէջ գոնէ տասը տարին մի անգամ անպատճառ սակ կը պատահի:

Արդ, սակն պատճառներն այսպէս համառօտիւ բացատրելէ յետոյ՝ կ'անցնիմք սա կէտին թէ ի՞նչ պէտք էր ընել և ի՞նչ պէտք է:

Ըստ մեզ՝ եթէ նախահոգ միջոցներ ժամանակին ձեռք չ'առնուին, կարող եմք վճռաբար ըսել թէ հասարակաց ղօղութիւնք՝ ոչ թան ալ արդիւնաւոր լինին, սակն աղետները հետևանաց առջևը չեն կարող առնուլ, որով սակն հետ՝ հետևանքն ալ միանգամայ կը ծանրանայ:

Ներկայ սակն համար կրնամք ըսել թէ այսպէս եղած է, որովհետև երբ երկու տարի առաջ գարնան ժամանակ սակ նշաններ կ'երևէին, յայտնի է ըսել թէ նախահոգ միջոցներ ձեռք չառնեցան, և ինչպէս կը յիշեն ընթերցողք, Սմբատ ներկայ Պատ. Յանձնաժողովը տարուց յոնվար ամսոյ մէջ կազմուեցաւ, որ տասն սակի արդէն ըսկըսեր էր ծանրանալ:

Մեր այս խորհրդածութիւնը սա եզրակացութեան կը յանգի թէ՝ մեք, ընդհանրապէս չատ մոյլ կը վարուիմք դրեթէ մեր բոլոր գործոցը մէջ և չատ հեռի եմք ապագան նախատեսելէ:

Սակայն տարբ հակառակ՝ երբ վտանգը գոյ հասնի, այն ատեն իրար կ'անցնիմք, և ինչ բան որ ժամանակին թեթև զոհողութեամբ կարելի էր վերջացնել կամ առաջքն առնուլ, յետոյ զոհողութեան աւելին կ'ընդմք, զմեզ ծանր վնասուց, աղետից և մինչև խոր վտանգաց ենթարկելով:

Եթէ երկու տարի առաջ գարնան ատեն ձեռնարկուէր հանգանակութեան, և եթէ կ'ըսեմք, նախահոգ միջոցներ վճռուէին ձեռք առնուէին, կրնալ է որ սակն այսքան սոսկալի, տարածուէր և այսքան սոսկալ պատուհէր:

Տարւոյս մայիս ամսոյ մէջ՝ իբրև միջոց, կառավարիչներ ազատակ տեղեաց վտանգեալ մէջ հակզութեան ներքև ցորեն հաւաքել տալ և կամ պատահած դատապարտեալ միջոցներ ձեռք առնուլ ապագայ նախազգուշութեան համար:

Թէպէտ այս ամառ բաւական քանակութեամբ սերմնացու ղրկուեցաւ, սակայն իրաց երևութէն կը ղուշակել թէ ուրիշ նախահոգ միջոցներ կամ բնաւ ի գործ չդրուեցան և կամ չատ քիչ:

Մեք այս կէտին նկատմամբ չեմք ուզեր Պատ. Յանձնաժողովոյ վրայ ծանրանալ, բայց չեմք կրնար չծանրանալ այն ամեն անճանոյ վրայ, որք ապատուած նպատան ընձեռելու մասին դեղևեցան և կամ աղնիւ զգացմամբ ընդհանրապէս ինքնայօրդոր չէր փութացան պատասխանել, ինչպէս պատասխանեցին մեր Ռուսահպակ պատուիրակ ազդայինք:

Նկատողութեան արժանի կէտ մ'ալ նաև թէ արդեօք սկսած եղածին չափ բժիշկ և դեղօրկք ղրկուած են մեզ սովեալ գաւառներն, ուր, դժբաղդաբար, կ'ըսուի թէ հետևդութիւնք, որ հետևանք են սովու, և մահ ոկսած են պատահիլ:

Մեր քաջ դիտեմք թէ Հայաստանի գաւառներն արդէն բժիշկ չգտնուիլ . ուստի անհրաժեշտ է որ մայրաքաղաքէս բժիշկ ղրկուի անվիջապէս , և սոյն պիտի նպաստակներու համար ամեն ոք և Հայոց Միացեալ ընկերութիւնն իսկ իւրովհետն օգնէ , ո՞չ գոհանալ ի՞նչ կը լինի Հայաստանի ապագան , եթէ Հայն Հայաստանի մէջ չվնասուի , և եթէ Հայն Հայաստանի մէջ սովու , անբնական մահուան և գաղթականութեան պատճառ նուաղի :

Եթէ չեմք կարող Հայաստանի մէջ անապահովութեան մասամբ առաջքն առնուլ , կրնամք սակայն սովու , անբնական մահուան և գաղթականութեան առաջքն առնուլ ինչ ինչ միջոցներով և գլխաւորաբար ինքնօգնութեան միջոցաւ :

Եթէ չեմք կարող զօրանք ի գործ դնել , որովք և կենդանութեան նշան ցոյց տալ , չեմք դիտեր ազգ , ազգութիւն , հայրենիք և այլն աղաղակելնիս ի՞նչ և օրպիսի օգուտ կը բերէ մեզի :

Ահա և այսպիսի կէտեր ի նկատ առնլով և իւրին մուծութեան և ուշադրութեան առարկայ ընելով , միթէ իրաւունք չունի՞մք ըսելու թէ արտաքին օգնութեանց վրայ միայն կեդրոնացնելով մեր բոլոր յոյսն ու ակնկալութիւնը , վրայ կուտամք նաև և մեր ներքին վերակազմութիւնն ալ :

ԱՐՈՒԵՍՏԱՍԷՐ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ցիշեալ ազգօգուտ ընկերութիւնն հետեւեալ յայտարարութիւնն ուղղած է , զոր հաճութեամբ կը հրատարակեմք :

« Արուեստասէր ընկերութեան Ընդհանուր ժողովն իւր 3/15 օգոստոսի նստին , Մշոյ մէջ երկրագործական վարժարան մը հիմնելու համար 500 ոսկւոյ վարկ մը քուէարկած ըլլալն արդէն ծանօթ է պատուական ազգայնոց :

« Գործադիր ժողովս կը փութայ ուրախութեամբ ծանուցանել թէ , Պ. Պետրոս Աֆգէրեան ընդհանուր անօրէնն և Պ. Գրիգոր Գաբրիէլեան վկայեալ երկրագործ և ուսումնասիրող , ամսոյս 15 ին հասած են ի Մուշ , իրենց հետ ունենալով երկրագործական գործիք և այլ պիտոյք , և թէ վարժարանիս բացումն տեղի ունեցած է ամսոյս 24 ին , Ս. Աստուածոյ վանուց մէջ :

« Գաղջը է մեզ յուսալ թէ պատուաւոր ազգայինք պիտի չզլանան ընկերութեանս՝ իրենց աջակցութիւնը տալն օգտակար ձեռնարկին ի գլուխ հանելու համար , որ ինչպէս յայտնի է , մի միայն գործանն պիտի լինի մեր հայրենեաց ներկայ աղետից » :

Ցիշեալ բարեպատակ ընկերութիւնը մեծ իրաւունք ունի ազգայնոց աջակցութիւնն սպասելու , որովհետև մեր հայրենի երկրին մէջ այն մեծ ծառայութիւնը կը մատուցանէ , որ հայրենեաց ներկայ անհրաժեշտ պիտոյից նկատմամբ ամենահարկաւոր է և հետևաբար արժանի խորին համակրութեան և քաջալերանաց :

Հետևաբար այսպիսի յոյժ բարեպատակ ձեռնարկութիւն մը քաջալերելն անպատճառ ամեն Հայու համար քաղցր պարտականութիւն մը պէտք է համարուի :

Յառաջիկայ թուով զանազան տեղեկութիւններ հրատարակելու առթիւ դարձեալ պիտի խօսիմք , որովհետև այսպիսի բարեպատակ ընկերութիւններ իրաւամբ մեզի նուիրական պարտաւորութիւն համարած ենք :

Տ. Ն. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

Նախորդ ամսոյս վերջին օրը մեզի համար սխուր օր մ'էր :

Ազգային բուրաստանի ծաղիկներէն մին , մեր դպրոցական վաղեմի ընկերը , Տ. Ն. Մէզպուրեան էֆէնտի , իր եղբօրը՝ Մէզպուրեան Մեծ. Մկրտիչ էֆէնտիի հայրապետով խնամօքը Ս. Փրկչի վարժարանին մէջ ուսման ընթացքն աւարտելէ ետև՝ ինքզինք զրակատնութեան տուաւ և 7–8 կտորէ չափ տպեալ երկասիրութիւններ ունի , ինչպէս նաև հայրենասիրական ոտանաւորներ և անտիպ դերձուածներ :

1860 թուականին Գումլիաբուի դրսի Պէշճեան վարժարանին տեսչութեան պաշտօնին կոչուելնալ, ղոր վարեց խիստ յաջողակութեամբ։

Յետոյ գնաց ի Տրապիզոն, ուր մի քանի տարուոյ չափ տեղւոյն երկսեռ վարժարանաց տնօրէնութեան և ուսուցչութեան կրկին պաշտօնները վարեց յոյժ արդիւնաւոր կերպիւ և իր համբաւոյն արժանի աշակերտներ հասոյց, որոց մին է Սարգեան Մկրտիչ եփէնտի, Տեռուչ Միացեալ Ընկերութեանց վարժապետանոցին ի Մուշ։

Վաղամեռն Մէզպուրեան տեսնելով հուսկ ապա վարժապետաց լքեալ վիճակն, ուսուցչութեամբ Աղգին ծառայելէ եաև՝ ուղեց այնպիսի ապագայի մը պատրաստուիլ, որով կարենար միանգամայն Ազգին և հասարակաց ծառայել. ուստի դարձեալ իւր հայրագորով եղբօրն օգնութեամբ և մասամբ իւր աշխատութեանն արդիւնքով գնաց Փարիզ, ուր անխոնջ աշխատութեամբ երկար տարիներ բժշկութեան պարապելով՝ վարժապետ Մէզպուրեանը բժիշկ Մէզպուրեան վերադարձաւ ի կ. Պոլիս և իբրև ճարտար բժիշկ՝ իրեն արժանի համբաւ ստացաւ։

Բարեյիշատակ Տ. Ն. Մէզպուրեան իւր ազգասիրական և մարդասիրական զգայմամբը լաւ ծառայութիւններ կը մատուցաներ ազքատ հիւանդներ ձրիաբար դարմանելով և մինչև իսկ հեռաւոր տեղեր անձամբ այցելութեան երթալով։

Իր ծանրաղբաղ պաշտօնին մէջ չէր դադրեր նաև Ազգին ծառայելէ, հետևաբար իբրև ազգային՝ կը խորհէր, իբրև երեսփոխան՝ կը խօսէր և իբրև դրագէտ՝ կը գրէր։

Ընաիր բարեմասնութիւններով, ընկերական գեղեցիկ ձիրքերով և աւելի մեծ ապագայի յոյսերով զարդարեալ Տ. Ն. Մէզպուրեանի վաղահաս մահը տարակոյս չկայ թէ ամեն ազգասիրաց մեծ ցաւ և ընդհանուր կսկիծ կը պատճառէ, կսկիծ, որ աւելի կը ծանրանայ, տեսնելով թէ այսպիսի անձանց պէտքն Ազգին համար յոյժ զգալի է, որովհետև մեր մէջ կարևոր և օգտակար մարդիկ դժբազդաբար շատ շուտ չեն հասնիր։

Անխոնջ աշխատութեամբ, կարօտութեամբ և պատուով յառաջանալ, ընկերութեան մէջ պատուաւոր դիրք մը բռնել, ազգին և հասարակաց օգտակար ըլլալ, մեծ ու գեղեցիկ ապագայ ունենալ, ընտանիք կազմել և սակայն փայլելու առեն մնռնիլ, ա՜հ, ամենէն մեծ դժբազդութիւնն այս է աշխարհի վրայ։

Դժբազդութիւն կըսեմք, որովհետև ինքնաբոյս մարդիկ աւելի լաւ կը ծառայեն Ազգին, քան թէ անունք, որ թէպէտ հարստութեամբ յղփացեալ, սին փառաց ու գեղեցկութեան մէջ կապրին, սակայն ազգին նկատմամբ, և օգտակար աշխատութիւններ քալքերելու մասին փափուկ՝ վեհմ և գեղեցիկ զգացումներէ առ հասարակ զուրկ կը դտնուին, որովհետև չեն պարապիր ուսումնասիրելու թէ ի՞նչ են պարտիքն ու աշխատութիւն։

Ահա այս ամենայն նկատումներով կըսեմք թէ Տ. Ն. Մէզպուրեանի և նմանեաց մահն ազգին համար ընդհանուր կսկիծի առիթ մ՚է։

Բարեյիշատակ հանգուցեալը կը թողու անմխիթար մայր մը, վշտահար այրի մը, երկու որբեր, հայրագորով եղբայր մը՝ Մկրտիչ էֆէնտի Մէզպուրեան և ուրիշ եղբայրներ։

Երկնից մխիթարութիւնը կը հայցեմք իւր պարագայից։

ԱԶԳԱՑԻՆ ՉՈՀԵՐ

1. Թշուառ ուսուցիչ, լեզուն մատենագիր,
Վհատած կղերը, աղքատ խմբագիրը,
Դուք էք մի միայն, ճշդրիտ ազգասեր
Ազգը սոսկ հոգաք սրտով վշտակիր։

2. Նահատակ էք դուք, ազգային զոհեր,
Ազգի փրկութեան կուրծք տաք անվեհեր,
Բայց աւա՛ղ, աւա՛ղ, ոդեփ ամբոխը,
Չը ճանաչեր Ձեզ, չը տար քաջալեր։

3. Դուք մի վհատիք, ամէն ճիգ ու ճար,
Ըրէք անձնուէր անխնայաբար,
Ազգի փրկութեան տուէք լինչ ունիք,
Թէ կեանք, թէ ոսկի, թէ այժ, թէ հանճար։

4. Կ'ուզայ ժամանակ չինչ երկինի վրայ
Հայկայ տան բազդը ղուարթ կ'լինգայ
Նավայ պարխսոլին ամէն կողմերը
Վսեմ փրկութեան դրոշը խաղայ։

5. Ան տեն միայն Ձեզ պիտ ճանաչեն,
Իրենց փրկիչներ կհռչակ պիտ կանչեն
Ձեր յիշատակին Ձեր անուան համար,
Կոթող պիտ կանգնեն, ու Ձեզ պիտ պաշտեն։

ՍՈՍԱՆՈՒԷՐ

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Փվխիսի մեր յարգոյ թղթակիցը «Մեղու Հայաստանի» լրագրէն հետեւեալ քաղուածը ղրկած է մեզի։

— «Անցեալ օրը «Արհեստաւորաց Մի. քայլեան» ուսումնարան է մտնում մի Հայ— կաթոլիկ քահանայ և Պ. դիրեկտօրին խընդրում է իւր ներկայացրած տղային՝ վրայ բաժնում ընդունել։

Այդ տեղի Հայ ուսուցիչներից մեկը հայերէն հարցնում է. Ձեր ներկայացրած երեխայի մականունը ի՞նչպէս է, դուք թէ քննութեան միջոցին պատահած լինի ինձ տեսնել . . . . .

Քահ. — Նորա մականունը կալայճեվ է։

Ուս. — Այդ մականունը կարծես հայի է և ոչ վրացու։

Քահ. — Հայ թումանովներ էլ կան, վրայիք էլ. ո՞ գիտէ, շատ կարելի է վրացի է։

Ուս. — Այդ աշակերտը երեւի ձեր ազգականն է . . .

Քահ. — Իմ իսկ եղբայրն է։

Ուս. — Միանգամայն զարմանալի է, որ ձեր ազգութիւնը չգիտէք. Աւասիկ խընդրեմ, ո՛ր տեղացի էք . . . .

Քահ. — Մենք Ախալքալաքից ենք և մեր պապերը մոլորեցին այդ տեղերը հասել. ուրեմն մենք ո՛ր տեղից կարող ենք իմանալ՝ հա՞յ ենք, թէ վրացի . . . . »։

— Մեծ. Պերպերեան էֆ. շաբաթ դիշերը Իւսկիւտարու լսարանին մէջ 'ի նպաստ սովեալց յոյժ դեղեցիկ բանախօսութիւն մ'ըրաւ, որմէ, կ'ըսուի թէ, 20 ոսկի հասոյթ դոյացեր է։

— Ռուսաց Բերայի հիւանդանոցին բժշկապետ Մեծ. Տ. Թամամշեֆ գիտնական և ազգասէր ազգայինը կիրակի օրը Պերպերեան վարժարանն այցելութիւն տալով՝ առիթ ունեցաւ երկարօրէն քննել ուսմանց հիմնադիրն և ղանաղան առարկաներ, որոյմէ խիստ գոհ եղաւ և խոստացաւ ուրիշ օր մ'ալ դասախօսութեանց ներկայ դանուիլ։

Ցիշեալ Հայազգի ճարտար բժիշկն օգուտ քաղող բազմաթիւ ազգայինք խընդրած և թախանձած լինելով իրմէ որ դէթ շաբաթն անդամ մը Պօլսոյ կողմը կեդրոնական դեղարան մը յաճախէ, կը լսեմք թէ յոժարութիւն յայտներ է, և հետևաբար օր, ժամ և տեղ պիտի որոշէ և 'ի դիւրութիւն պիտի ծանուցանէ եղերը։

ՇԱՆՈՒԾՄՈՒՆՔ

ՏԵԼԵՄԱՔ ԷՖԷՆԴԻ ԼՔՍԷՐՃԵԱՆ

Նկարչութեան և դիմագրութեան արուեստին մէջ ունեցած համբաւեալ հմտութեամբ րըն ու յաջողակութեամբն հանրածանօթ Տելեմաք էֆէնդի Լքսէրճեան պատիւ կը համարի ծանուցանել թէ իւր բնակութիւնն ու արուեստանոցն այս անգամ Բերայ Փէրիփէի վաղոց թիւ 19 տունը փոխադրած է, ուր մեծ. յաճախորդք ամեն օր առաւօտէն մինչև ի ժամ 3 և կիրակի օրերն ալ առաւօտէն մինչև երեկոյ կրնան պինքը գտնել։

ԴԱՍԱՏՈՒՈՒԹԻՒՆ ԴԱՇՆԱԿԻ

կը տամ ֆրանսերէն լեզուով և օրիորդք, որ հրաւիրուին Գում—գափու, Պատրիարքարան վաղոց թիւ 18 տունն ուր ամեն Գշ. և Ուբ. օրերը ժամ 5—10 աշակերտ կընդունի Օր. Ղամբէուհի Ց. Թիւլպէնտճեան, որոյ հմտութիւնն արդէն հանրածանօթ է։

Գիները դիւրամատչելի են։

Ե. ԲՕԼ ՏԸ ԳՕԳ

ԿԻՆ ԽԱՂ ԳԻՆԻ

Թարգմանեալ ի Գաղղիերէնէ

Հրատարակէ Կ. Ա. Պաբնեան

Կը ծախուի ամեն Հայ գրավաճառաց քով։ Գին 10 ղուրուշ։

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ

Գրեց Ց. Ճ. Պարոնեան

Հրատարակէ Մ. Ղ. Պապէպպանեան

Ազգային ժամանակակից վէպ մ'է, որ տեղ առ տեղը սկսած է հրատարակուիլ, առաջին տեղը իւրայ ընծայուած ըլլալով, կը ծախուի գրավաճառ Մ. Ղուկասեան և Ֆրէնկեան գրատուներուն, սուճի Պօղոս աղայի խանութը և լրագրավաճառներու քով ի գին 40 փարայ։

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՑՈՅՑ

1884

ԹՈՒՄԱԿԱՆԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ

Գին 100 ՓԱՐԱ

ՅՕՐԻՆԵԼ ՅԵՐԵՄԻԱ ՔԱՀԱՆԱՅԷ ԽԱՍՊԻՒՂԻ

ՍԵՊՀԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ս. ՓՐԿՉԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ ՀԱՑՈՑ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա.ՐԱՄԵԱՆ

Պարունակութիւն

Վիճակագիր աերութեանց. — Հայրապետութիւն Հայոց. — Հայատառ աշխարհ կամ Ամենիա. — Օսմանեան միջազգային թղթատարութիւնք. — Ժամանակագոյն սուրհանդակաց Օսմանեան միջազգային թղթատարութեանց. — Եւրոպական նամակատունք ի Կ. Պոլիս. — Յուսակ գնոց թղթատարութեանց և հեռագրութեանց եւրոպական և Ասիական քաղաքաց Թուրքիոյ. — Սակագին հեռագրի ըստ նոր կարգադրութեանց միջազգային թելերու. — Ընկերութիւնք չոգեշարժ նաւարկութեան, ինչպէս են, եգիպտական (Խեդիվիյէ). — Մախսուսէ. — Աւստրօ-Հունգար Լոյտ. — Մէսաժըրի Մարիթիմ. — Բաքէ էնէ և ընկերութիւն. — Ռուսական ընկերութիւն. — Ընտանեկան դեղարան։

ԱՐՏՕՆԱՏԷՐ
Հ. Ե. ԴԻՄԱՔՍԵԱՆ

ԽՄԲԱԳԻՐ
Մ. ԳԱՓԱՄԱՃԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՒԱՑԵԼ ՍԱՐԸԵԱՆ
Մէրման չարչի Բիւշտի էֆ. խանի տակ թիւ 20